

Մայր Աթոռ Ս. Էջմիածին
Տեղեկատվական Համակարգ
Հեռ.: (374 10) 517 128
Հեռախոս: (374 10) 517 301
Էլ-փոստ: holysee@etchmiadzin.am
Տնօրեն՝ Տ. Վահրամ քհն. Սելիքյան

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Սեպտեմբերի 30, 2008թ.

**«Կլիմայի փոփոխության հիմնական մարտահրավերները»
թեմայով համագումար Միլանում**

Սեպտեմբերի 24-ից 28-ը Միլան քաղաքում տեղի ունեցավ Համաեվրոպական Զրիստոնեական բնապահպանական ցանցի 7-րդ համագումարը՝ «Կլիմայի փոփոխության հիմնական մարտահրավերները» թեմայով, որին մասնակցում էին ավելի քան 100 պատվիրակներ Եվրոպական 27 երկրներից:

Ժողովականներն անդրադարձան անցյալ տարի սեպտեմբերին Ռոմինիայի Սիբիու քաղաքում տեղի ունեցած Համաեվրոպական երրորդ էկոմենիկ համագումարի ընթացքում բնապահպանական խնդիրների առնչությամբ կատարված առաջարկներին, որոնցով կոչ էր ուղղվում Եկեղեցիներին առանձին օրեր սահմանել որպես «Արարչագործության օր» և այդ օրերին անդրադառնալ բնապահպանական խնդիրներին:

Ժողովի ընթացքում անդրադարձ կատարվեց աշխարհում կլիմայի փոփոխության խնդրին և այս առնչությամբ Եկեղեցիների առջև ծառայած մարտահրավերներին: Խնդրի շուրջ լավեցին տարբեր եկեղեցիների ներկայացուցիչների տեսակետեր:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուց ժողովին մասնակցում էր Սևանի Վազգենյան դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Գևորգ աբեղա Սարոյանը, որը ժողովականներին ներկայացրեց Վազգենյան դպրանոցում իրականացվող «Կանաչ Աստվածաբանություն» ծրագիրը:

Միջեկեղեցական հարաբերությունների բաժին
Պատասխանատու՝ Եզնիկ Արք. Պետրոսյան
Գրասենյակի վարիչ՝ Հովակիմ Վրդ. Մանուկյան
Հեռ. 517 155/160
Էլ. փոստ. inter@etchmiadzin.am